ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՎՈՐԳ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԵՒՈՐԳ ԱՆՏՈՆԵԱՆ, ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ԱՒՍՏՐԻԱ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցու հանդէպ դրսեւորած Ձեր որդիական սիրոյ ու նուիրումի եւ մատուցած բարի եւ մեծարժէք ծառայութիւնների համար:

Սիրելի պրն Անտոնեան, ճանաչում ենք Ձեզ դեռեւս Վիեննայում ուսանելու տարիներից, երբ Դուք, որպես երիտասարդաց միութեան անդամ, աշխոյժ մասնակցութիւն էիք բերում Աւստրիայի հայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքից ներս՝ Ձեր կարողութիւններն ու երկնատուր շնորհները երիտասարդական խանդավառութեամբ եւ ծառայասիրական պատրաստակամութեամբ ի սպաս դնելով յօգուտ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ բարեպաշտ ժողովրդի:

Հայրապետիս համար ուրախութիւն է տեղեկանալ, որ Դուք եկեղեցանուէր եւ հայրենապաշտ նոյն ոգով շարունակում էք Ձեր ծառայութիւնները Աւստրիոյ Հայ Առաքելական Եկեղեցու Համայնքի Վարչութեան ատենապետի պատասխանատու պաշտօնում՝ Ձեր աջակցութիւնը բերելով հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորեանին եւ հոգեւոր դասին՝ ի խնդիր հայ կեանքի զօրացման եւ Մայր Եկեղեցու պայծառութեան:

Արդարեւ, աստուածահաճոյ բազում գործերով է արդիւնաւորուած Ձեր կեանքը, եւ Ձեզ պէս հայորդեաց է ուղղուած աւետարանական լոյս պատգամը՝ «Երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ եւ պահիցեն»:

Սիրով ընդառաջելով Կենտրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորեանի ազնիւ խնդրանքին եւ բարձր գնահատելով Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութիւնները,

Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք առաւել խանդավառութեամբ եւ կորովաշատութեամբ յետայսու պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը մեր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Սուրբ Ներսէս Շնորհալու բարեխօսութեամբ հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Նոյեմբերի
Ցամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 69